ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/0404/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

27 հունվարի 2025թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Սուր և Նիզակ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Երևանի Է. Թելմանի անվան № 13 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի, երրորդ անձ՝ «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊ ընկերություն՝ թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշումը՝ «ՍՈՒՐ և ՆԻԶԱԿ» ՍՊ ընկերության հայտը մերժելու և «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Սուր և Նիզակ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. հունվարի 17-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի Է. Թելմանի անվան № 13 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի, երրորդ անձ՝ «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊ ընկերություն՝ թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշումը՝ «ՍՈՒՐ և ՆԻԶԱԿ» ՍՊ ընկերության հայտը մերժելու և «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Դատարանի 2025թ. հունվարի 23-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Որոշումը ստանալուց հետո՝ 2025թ. հունվարի 23-ին, հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, որը մակագրվել է նույն օրը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. հունվարի 24-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և

122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2025թ. հունվարի 17-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Սուր և Նիզակ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Երևանի Է. Թելմանի անվան № 13 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի, երրորդ անձ՝ «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊ ընկերություն՝ թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված որոշումը՝ «ՍՈՒՐ և ՆԻԶԱԿ» ՍՊ ընկերության հայտը մերժելու և «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2025թ. հունվարի 17-ին:
Թիվ ԵԴ2/0404/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. փետրվարի 28-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.01.27 17:12:25 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am